Funded by the European Union

ԵՂԻ՛Ր ԻՐԱՁԵԿ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԻ՛Ր ԻՆՔԴ ՔԵԶ

ԾՐԱԳԻՐ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն ամփոփաթերթը տպագրվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և «ՄԱԿ Կանայք»-ի ու ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից իրականացվող «ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության.միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և բռնության» ծրագրի շրջանակներում: Այս ամփոփաթերթը տպագրվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամն ու «ՄԱԿ Կանայք» կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՆԱԽԱՁԵՌՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Սույն զեկույցի տպագրության նախաձեռնող խումբը շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ում անմիջական աջակցությամբ և մասնակցությամբ հնարավոր դարձավ Սպիտակ համայնքում հաշմանդամություն ունեցող կանանց շրջանում հետազոտության իրականացումը և արդյունքների տպագրությունը:

Սույն զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և «ՄԱԿ Կանայք»-ի ու ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից իրականացվող «ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. Միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և բռնության» ծրագրի շրջանակներում իրականացվող «Հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ գենդերային բռնության դեմ պայքար արևելյան գործընկերության վեց երկրներում» ծրագրի շրջանակներում:

Շնորհակալություն ենք հայտնում նաև «Առաքելություն Հայաստան», «Փեթակ» բարեգործական հասարակական կազմակերպություններին, Միասնական սոցիալական ծառայության Սպիտակի բաժնին՝ մեծ պատրաստակամությամբ աջակցելու, իրենց շահառուների շրջանում հարցումներ իրականացնելու համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մարտ-մայիս ամիսների ընթացքում «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը «Եղիր իրազեկ և պաշտպանիր ինքդ քեզ» ծրագրի շրջանակներում իրականացրել է հետազոտություն Սպիտակ համայնքում՝ հաշմանդամություն ունեցող կանանց հիմնախնդիրների բացահայտման նպատակով: Նման հետազոտություն համայնքում 1988 թվականի ավերիչ երկրաշարժից հետո չէր իրականացվել: Իհարկե, կազմակերպությունը տեղյակ էր առկա խնդիրներից, քանի որ բազմիցս ծառայություններ է մատուցել հաշմանդամություն ունեցող կանանց, բայց այս հետազոտությունը հնարավորություն տվեց իրականացնել հիմնախնդիրների քարտեզագրում, որը կնպաստի կազմակերպությանն՝ ավելի ուղղորդված և ադյունավետ մշակել հետագա ծրագրերը և ծառայությունները: Մեր կազմակերպության հետագա ծրագրերը նախատեսվում է դարձնել ավելի ներառական և մատչելի հաշմանդամություն ունեցող բոլոր խմբերի կանանց համար: Կազմակերպության կողմից կիրականացվեն հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության և կյանքի որակի բարելավմանն ուղղված գործողություններ:

Այսպիսով, հետազոտության նպատակն էր բացահայտել Սպիտակ համայնքում ապրող հաշմանդամություն ունեցող կանանց հիմնախնդիրները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության համար կիրառվել է **քանակական** և **որակական** մեթոդներ: Քանակական մեթոդով ցանկացել ենք ընդհանրական պատկերացում կազմել հաշմանդամություն ունեցող կանանց հիմնախնդիրների մասին: Որակական մեթոդի համար իրականացվել է ֆոկուս խմբային քննարկում՝ հաշմանդամություն ունեցող այն կանանց շրջանում, ովքեր որոշակի չափով բարձրաձայնում են իրենց հիմնախնդիրները և պայքարում դրանց դեմ: Ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցել է 11 կին. երկուսը մասնակցել են առցանց զում հարթակի միջոցով, իսկ 9 կանայք մասնակցել են ֆոկուս խմբային հանդիպմանը «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գրասենյակում: Հատուկ ընտրանք չի կիրառվել, քանի որ ընդգրկվել են Սպիտակ համայնքի թվով 50 հաշմանդամություն ունեցող կանայք, ովքեր ինչ-որ կերպ առնչություն են ունեցել կազմակերպության հետ: Կազմակերպությանը այս հարցով աջակցել են Սպիտակ համայնքում գործող ՔՀԿ-ներ և անհատ քաղաքացիներ: Հետազոտության հարցումները իրականացվել է դեմառդեմ, և արդյունքները ամփոփվել են ընդհանրական ձևով՝ պահպանելով անձի անձնական տվյալների գաղտնիությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությանը մասնակցել են Սպիտակ համայնքի թվով 50 կանայք (8 կին եղել են գյուղաբնակ, իսկ 42-ը՝ քաղաքաբնակ): Նրանցից յուրաքանչյուրի հետ իրականացվել են անհատական հարցումներ, իսկ ևս 11 կնոջ հետ իրականացվել է ֆոկուս խմբային քննարկում: Հարցաթերթը բաղկացած էր հետևյալ բաժիներից՝ ազատ տեղաշարժվելու, կրթության, աշխատանքային, առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքներից:

Հարցմանը մասնակցել են հետևյալ տարիքային և հաշմանդամության խումբ ունեցող կանայք.



Տես գրաֆիկ 1, 2



Հարցվածների 65%-ի եկամտի հիմնական աղբյուրը հաշմանդամության նպաստն է եղել, 10% աշխատավարձ, ընտանեկան նպաստ 6%, սոցիալական նպաստ 14% և ծերության նպաստ 5%: Հարցվածների 35% ամուսնացած են եղել, 19% չամուսնացած և 46% նշել են այլ տարբերակ: Նրանցից 63% բնակվում է ընտանիքի հետ, 19% միայնակ, իսկ 18%-ը հաստատությունում:
Այն հարցին, թե կարողանում են ինքնուրույն և անագրել դուրս գալ համայնք և օգտվել ծառայություններից՝ այո են պատասխանել 87%-ը, իսկ ֆիզիկական խնդիրներ ունեցող հարցվածների ճնշող մեծամասնությունը պատասխանել է, որ չի կարող օգտվել իր ազատ տեղաշարժի իրավունքից շենք շինությունների և տրանսպորտի անմատչելիության պատճառով :





Հարցվածների 24%-ը ցանկություն է հայտնել շարունակելու կրթությունը՝ աշխատանք ունենալու համար, իսկ 76% չի ցանկանում կրթությունը շարունակել, քանի որ իրենց համարում են արդեն ծեր՝ կրթություն ստանալու և գիտելիքներ ձեռք բերելու համար:

Այն հարցին, թե արդյոք բարձրագույն կրթական հաստատության շենքը, կրթական նյութերը մատչելի են, և արդյոք դասախոսները ունեցել են հաղորդակցման հմտություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց որակյալ կրթություն ապահովելու համար, գերազանց բոլոր հարցերին պատասխանել են հարցվածների 30%-ը, լավ գնահատել են 65% և վատ 5%:

Ըստ հարցվողների կրթական ոլորտը՝ կլինի դպրոց, միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություն, հասանելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Դպրոցում հաշմանդամություն ունեցող անձանց խիստ խտրական են վերաբերում, նույնիսկ ֆիզկուլտուրայի ժամերից ազատում են, դասերի փոխարեն նկարչություն են տալիս անել, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններ նույնիսկ հնարավոր չէ մուտք գործել, ինչ մնաց սովորել: Ուսումնական նյութերը չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

Հարցվողների 76%-ը պատասխանել է, որ կցանկանա աշխատել, իսկ 24%-ը պատասխանել է՝ ոչ: Եթե ունեք աշխատանքային փորձ, սակայն հանդիպել եք որևէ դժվարության հարցին՝ թե՛ ֆոկուս խմբային քննարկման մասնակիցները, և թե՛ հարցման մասնակիցները նշել են գործատուների մոտ առկա կարծրատիպերը, որոնք մեծ խոչընդոտ են հանդիսանում կանանց համար: Հիմնականում չեն դժգոհում վերաբերմունքից և վարձատրության չափից, քանի որ անօգուտ է բողոքել այս իրավիճակում, երբ աշխատանք չկա, և մեծ է գործազրկության թիվը: Նրանցից մեկը նշել է.՝ «Գիտեմ, որ դուրս գամ, այլ գործ չեմ ճարի, իսկ էսպես գոնե զբաղվում եմ: Գիտեմ, որ ինձ չարաշահում են, իմ իրավունքները խախտում, բայց այլ տարբերակ չունեմ»:

Այն հարցին, թե արդյոք կարողանում են օգտվել հանրային առողջապահական կենտրոններից՝ հարցվողների 43%-ը պատասխանել են այո: Վերարտադրողական առողջական ծառայություններից 25%-ը կարողացել են օգտվել, ատամնաբուժական ծառայություններից՝ 33%-ը: Իսկ հարցվողների 2%-ը չեն օգտվել նման ծառայություններից, քանի որ անմատչելի են նման հաստատությունները, բուժաշխատողները ունեն կարծատիպային վերաբերմունք: Պետպատվերից օգտվելու ժամանակ հարցվողների 30%-ը խնդրի չեն առնչվել, իսկ 7%-ը առնչվել են, քանի որ սպասելաժամանակը շատ է, և երբեմն դառնում է անիմաստ սպասելը: 3%-ը տեղյակ չէ նման իրավունքի մասին, իսկ 60%ը նման կարիք չի ունեցել:

Թե՛ հարցվողները, և թե՛ ֆոկուս խմբային քննարկման մասնակիցները խուսափեցին պատասխանել ընտանեկան բռնությանը վերաբերվող հարցերին: Նրանք նշեցին, որ չեն ենթարկվել որևէ բռնության: Սա նաև ազդակ էր կազմակերպության համար, որ կարիք կա իրազեկման, որի ուղղությամբ և իրականացվում են աշխատանքներ:

Այսպիսով, վեր են հանվել հետևյալ խնդիրները.

- Համայնքի ենթակառուցվածքները անմատչելի են, դեղատները, բանկերը, խանութները, բուժհաստատությունները չունեն թեքահարթակներ, իսկ եթե կան էլ, չեն համապատասխանում նորմատիվային չափանիշներին: Հարցվողներից մեկը հավելեց, որ Սպիտակի մշակույթի տան թեքահարթակը «գլուխ ուտելու» հարթակ է:
- Հանրային տրանսպորտը ընդհանրապես խնդիր է բոլոր քաղաքացիների համար:
- Գործատուները, կրթական հաստատությունների և բուժհաստատությունների աշխատակիցները ունեն կարծրատիպեր և դրսևորում են խտրական վերաբերմունք հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չնայած նրան, որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան 2010 թվականին և իր օրենսդրությունը, քաղաքականությունը, ռազմավարական ծրագրերը աստիճանաբար համահունչ է դարձնում կոնվենցիային, այնուամենայնիվ հաշմանդամություն ունեցող անձինք, հատկապես կանայք Հայաստանում ենթարկվում են տարաբնույթ խնդիրների՝ ազատ տեղաշարժումից մինչև կրթություն: Վերջիններս, իրենց հաշմանդամությամբ և սեռով պայմանավորված, բոլոր ոլորտներում հանդիպում են խտրականության և միջավայրային, հաղորդակցային, տեղեկատվական և վերաբերմունքային խոչընդոտների:

Պետք է հասնել այն իրավագիտակցության, որ հաշմանդամություն ունեցող կանայք հասարակության լիիրավ անդամներ են, ովքեր ունեն հավասար իրավունքներ և պետք է ունենան հավասար հնարավորություններ:

Այսպիսով առաջարկում ենք՝

- Ծահերի պաշտպանություն իրականացնել տեղական և ազգային մակարդակով՝ հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքներից բխող օրենդրության ընդունման, կիրարկման մեխանիզմների մշակման և ներդրման, մշտադիտարկման և գնահատման համար:
- Ստեղծել փոխօգնության խմբեր, որոնք պարբերաբար խորհրդատվություն և աջակցություն կտրամադրեն հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի կանանց:
- Պարբերաբար կազմակերպել զորեղացման և իրազեկման դասընթացներ հաշմանդամություն ունեցող կանանց համար:
- Կազմակերպել իրազեկման հանդիպումներ համայնքում ծառայություններ մատուցող հաստատությունների ներկայացուցիչների համար՝ գենդեր և հաշմանդամություն թեմայով:
- Իրականացնել մշտադիտարկում՝ նոր կառուցվող և հիմնանորոգվող շինություններում՝ հաշմանդամություն ունեցող անձանց բոլոր խմբերի համար մատչելիության տեսանկյունից: